

Արեմն կլանելու երևոյթը կը կայանայ՝ ուտելիքներուն բերնէն ստամոքսը իջնելուն վրայ, կոկորդին և որկորին մէջէն անցնելով:

Կոկորդը՝ անմիջապէս բերնէն ետքը եկող խորշն է, որ վզին վերի դին կ'իջնայ: Ա՛րի կողմէն ռնգանց խորշերուն հետ կը հաղորդուի, ու վերէն և առջևէն միայն քմաց առագաստովը բաժնուած է բերնէն: Ա՛րէն և առջևէն կոփափին՝ ու շնչափողին՝ հետ կը հաղորդուի, որ օդը՝ թոքոց մէջ տանող անցքերն են: Իսկ վարէն ու ետևէն որկորին՝ հետ կը շարունակուի, որ նեղ խողովակ մըն է, որ վզէն սկսեալ կրծոց մէջէն և ողնաշարին առջևէն վար կ'իջնայ, երկու թոքոց մէջէն ու սրտին ետևէն անցնելով, առագաստը կը ծակէ ու ստամոքսը կը լմնայ:

Արեմն ուտելեաց կունտը կոկորդը իջնելու ատենը՝ հարկ է որ ռնգանց խորշերուն ետևի կողմի մուտքին և հազազին անցքին առջևէն անցնի, և առանց ասոր կամ անոր մէջ խոտորելու, շիտակ ստամոքսը իջնայ: Ա՛յս պատճառիս համար է որ քմաց առագաստը՝ մինչդեռ հորիզոնաբար վեր կ'ելէ ուտելեաց ձամբայ տալու համար, անմիջապէս նաև ռնգանց խորշերուն ետևի կողմի անցքը կը գոցէ, ու կ'արգելու ուտելիքին որ դէպ 'ի ռնգանց խորշերը չէլէ՝ այլ որկորը անցնի: Հազազին առջևէն ալ որ կ'անցնի՝ որպէս զի մէջը չմտնէ, անմիջապէս անցքին առջևը լեզուակ մը կայ դանկիէ՝ անուշով, որ իջնալով ան մուտքը կը գոցէ. անով ուտելեաց կունտը ուրիշ ազատ անցք մը չգտներ՝ բայց եթէ այն որ շիտակ ստամոքսը կը տանի. ուստի կոկորդին և որկորին շարժմունքներովը՝ ուտելիքը հետզհետէ մինչև ստամոքսը կը մղուի:

Ա՛յս կոկորդին, որկորին ու հազազին շարժմունքները՝ առանց կամաց ազդեցութեանը ու խիստ արագութեամբ կը կատարուին. անանկ որ ուտելիք մի

և նոյն ըոպէն՝ կոկորդէն ստամոքսը կ'անցնին:

Իայց կ'ըլլայ երբեմն որ ուտելիքը բերանը եղած ժամանակը յանկարծական ծիծաղի մը պատճառաւ կամ ուրիշ պատճառի համար մոլոր կ'երթայ. վասն զի զանկիկին յանկարծ վեր ելլելովը հազազին մուտքը բաց կը մնայ ու մէջը ուտելեաց փշուրներ կ'երթան. որով հարկ կ'ըլլայ սաստիկ հազով զանոնք դուրս մերժել, որ երբեմն նաև ծանր հետևանքներ կրնայ ունենալ:

Կը շարունակուի:

ՈՒՍՈՒՄՆ ՀԱՅՐԵՆԵԱԾ  
ԲՆԱԽՕՍՈՒԹԻԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Տես երես 311)

Դ

Ա՛յս պզտիկ որդը մեզի առաջնորդ առնելով բուսական ցեղապետութենէն անցնելու 'ի կենդանականն, բնականապէս նախ իր կարգին կու գամք, և անտարակոյս կրնամք գտնել Հայաստանի մէջ քանի մը նորատեսակ միջատներ և մանաւանդ պատենաթև ցեղէն: Գերմանացի բնագէտ ճանապարհորդ՝ մը հազարաւորներ ժողոված է ասոնցմէ և իր աշխարհին զանազան բնապատմութե հաւաքարաններու բաժներ է: Իր հայրենակցաց մէկն այլ՝ Հայոց արևելեան նահանգաց մէջ կը նշանակէ տեսակ մը մեծ ձպուան, որ իր ճուռողմամբ կրնար մրցիլ թիփոկիտեայ սրնգափողից հետ: — Ա՛յս կարգի կենդանեկաց թագուհին Ս'էդուան, կ'ընծայէ մասնաւորապէս յԱ՛յրարատ և 'ի հարաւակողման գաւառս՝ իր պատուական վաստակը, որ մեր երկրին գլխաւոր վաճառոց թուակից է: Երամ որդոյ դարմանն շատ հին չէ մեր երկրին մէջ. հի-

1. Գղ. Pharynx. — 2. Larynx. — 3. Trachée artère. — 4. Oesophage. — 5. Epiglotté.

1. Վակներ: 2. Գողենադի:

մա կը յաջողի կազմակերպել մօտ 4 առաջ մէջ :

Ուրիշ և բարձրագոյն կարգ մը կենդանեաց, Չկանց, արժանի է մտադրու թեան, թէ և մեր աշխարհն շատ քիչ կամ թէ բնաւ չունի ծովեզերք : Լաւրի (Saumon) մարդաչափ մեծութեամբ կազմեց ծովէն գալով վեր կ'ելլայ Լըրասիայ և կուրի մէջ, և այնքան առատ որ միայն ձուերը կը հանեն ազնիւ աղկիթ (սպիտակ) շինելու համար, և մի սը կը թափեն : Հայաստանի ամենէն հասարակ և ծանօթ ձուկն է կարբուխայոն, որ ամէն գետոց աղբերականց մէջ կը վխտայ, և ինչուան Լըփրատայ 9000 ոտք բարձր ականց մէջ, 'ի կարին : Լըրասի կը բերէ երկայնաձև ձանառ, և թանձրամարմին Լոփր, որ Լըփրատայ և մանաւանդ Լըրաժանուոյ մէջ շատ վիթխարի մեծութիւն կը գտնուի և նհանգ կ'անուանի, իբրև կէտ ձուկն : Լոյն տեսակէն կարծուի թէ գտուին Հառչակայ փոքր լճին մէջ, որ շատ ձկնոտ է, մինչդեռ անոր մօտ Սանայ աղի ծովն, որ մեծագոյն է քան զամենայն ծովակա յառաջակողմեան Լոփոյ, և անոր համար կոչուի Նոյլ Լըթամարայ (յանուն գլխաւոր կղզւոյն), միայն մէկ տեսակ բնակիչ ունի, պղտի ձուկ մը որ Կոփուի . որ պատուական սնունդ կ'ըլլայ և շահաբեր վաճառ մը, վասն զի աղած և չորցուցած կը զրկեն չորս կողմի գաւառները, 'ի Բրդաստան և 'ի Վարսկաստան : Սեանայ անոյ ծովակն որ փոքր է քան զԼըթամարայն և բարձր քան զայն (6500 ոտք յերեսաց ծովու), ըստ աւանդութեան բնակչաց եզերացն 12 տեսակ ձուկն ունի : — Ուրիշ լճակ մը այրարատեան լեռանց պարուն ստորոտը, կողայուլտի շամբն, որ հիմա Պալըֆէօլ կը կոչուի ձկանց առատութեամբն, տարեկան միլիոն մը Փրանգի շահ կրնայ տալ . անոր համար Սուսաց և Սմանեանց յետին սահմանաչափութեան ատեն՝ վիճի առիթ մը եղաւ : — Հի-

մա թողլով ձկնասիրաց քննել Հայաստանի գետերուն մէջ այն մահաճամ սև ձուկը՝ զոր կը յիշէ հին պատմիչն Վտեսիաս, կ'ուզէի որ մեր տեղագնինք աչք մը տային 'ի վերայ բովանդակ ջրոց՝ որ Հայաստանի մեծ և փոքր լճերը կը ձևացնեն, և իրեն նշանաւոր կերպարանք մ'այլ կու տան : Լըթամարայ ծովէն չհեռացած պէտք է դիտել Ուրեոյ լիճը կամ կադոփան ծովը, որ առաջինէն աւելի երկայն է, թերևս աւելի այլ ընդարձակ : Լոյս երեք յիշեալ մեծամեծ լճաց հետ չորրորդ մ'այլ ծովան շիտոյ որ հիմա Չըլթըֆէօլ կ'ըսուի, յարևմտեան հիւսիսակողմն Հայոց, մեր երկրին երեսաց վրայ՝ տրամանկիւն մը կը ձևացնէ, և կենդրոն է երկոտասնեակ մը մանր լճակաց : Հարևմտակողմն հարաւոյ բաց 'ի ծով (Կիօլճիւկ) լճէն, կայ բազմութիւն լճակաց այն լեռներուն վրայ՝ որ ասոնց պատճառաւ Պիւֆէօլ կը կոչուին : — Հայոց մեծ ու փոքր քառասնիւ չափ լճերուն միահամուռ տարածութիւն կրնայ 10,000 հեկտար հաշուիլ : Բնգհանրապէս այս լճերուն ափունքն նուազեալ բուսաբերութեամբ, դրից զանազանութեամբն և վսեմական տեսարաններով գերազանցեն քան զլիճն Սուիցերեաց . բայց ամենէն գեղեցիկ և վառվռուն տեսարանն իրենց թեւաւոր բնակիչներն են : Թերևս չկայ երկիր մը որ այնքան բազմութիւ և բազմազան ջրային թռչուններ ունենայ, ինչպէս Հայոց լճերն և մօրերն : Լոյս ետքի տեսակ ջրչեղջից մէջ անուանի է կարնոյ շամբն կամ մօրն, (Սաղլըգ) . որոյ թռչնոց հաւկիթներն բաւական էին շրջակայ գեղերու բնակիչները կերակրելու ըստ վկայութեան մեծի պատմիչն մերոյ . որ կարծեմ ձեզի չափազանցութիւն մը կ'երևնայ . բայց ինչ պիտի ըսէք տեղոյն անգղիական հիւպատոսարանին և վաճառական գործատանց զբոսասէր պարոններուն վկայութեանը, որք կը հաւաստեն թէ տարւոյն կենդանաբեր եղանակին մէջ՝ շամբին բոլորտիքն մինչև բաւական հեռու միջոց գրեթէ անընդհատ կը ծածկուին հաւեղինաց

1. Կանեղի է որ Յոյնք սղած ձկան (և մի ալ) Կոփուի անունը կու տան . τάρλαρο, Կոփուի, որ և է աղածն ուղ Կոփուիին կոչի :

երաներով, մինչև համարձակ ձիագնացութեան արգել ըլլալ . այս դաշտի մէջ (Վարնոյ) համրած են աւելի քան զ200 տեսակ թռչնոց, շատն ջրային : Կրեթէ բովանդակ թռչնական ցեղից յորսին երեքն ճանչցուած են ՚ի Հայս, մանաւանդ բարձրասրունք, մաշկոտունք, ճնշողիաց ցեղքն, և գիշահաւք . այս ետքի ցեղիս մէջ արժանի են յիշման Լաչհաւն, որ է գառնակեր մեծ անգղն (Fulmar), և Սպերոյ ու Բրաբատայ բազայք, որ շատ ճարտար են յորսալ իրենց դասակիցները . աղէկ վարժածներն ինչուան 200 Ֆրանգ կ'արժեն : Արտոյ կամ վայրի հաւուց մէջ նշանելի են մեծ կաքաւն՝ նման հնդկայնոյն, և ուրիշ տեսակք կաքաւու, սարսարեկք (bécasse, Բեյկէ), աքար (bécassine), աքլոր (râle), թանձր (outarde), սալամբ (francolin), հասարակ փասիան և լոր : Մրահաւուց մէջ զանազան տեսակք վայրենի սագի, բադի և կարապի, հաւալուսն կամ ջրխոթան, արօր (morillon), հողամաղ (harle), որօր (mouette), և շորոր, լուղիկ (plongeon), տեսակ տեսակ տառեղանց (héron) և ծիծռանց ջրայնոց . ցեծ կամ քաջահաւ կանաչ և սեաւ (ibis) . և երկու աշխարհածանօթ պանդուխտքն, կուռնկ և արագիլ, որք ինչպէս առ օտարս՝ ոյսպէս և ՚ի Հայս մանաւոր պատիւ ունին<sup>1</sup> : Արհին թագաւորք բաց յընդհանուր որսապետէն (որսապետն արքունի) ունին և հաւորսութեան վերակացու և թռչնապահս, և թերևս ասոնք էին հանունիք . ոչ սակաւ տոհմք և ցեղապետք թռչուններէ առած էին իրենց անունն, ինչպէս Բրժրունիք, Բագէակալք, Վարապունիք, Բղանունիք, Կրունիք, և այլն, և այս թռչունները կամ ողջ և կամ պատկերնին դրօշներու

վրայ կրէին ազգային տօնից մէջ, որոց սկիզբն շատ հին է, թերևս ոմանցը ելլէ մինչև ՚ի ջրհեղեղ : Այս մեծ պատահարս երկրիս ուրիշ կողմը այնքան զգալի այլալուծիւն և պատմութեան մէջ յիշատակ չէ թողած ինչպէս մեր աշխարհը . և արդեօք այս թռչնոց հեղուկ բնակարաններէն ոմանք զոր յիշեցինք, մնացորդ չեն այն մեծ հեղեղմանն, որ քիչ շատ բոլոր հողագնտին օրէնքները այլափոխեց : Ստորին Վուրայ ողողակքն, Երասխայ հովտին մրրանիստ հողակարգքն՝ բաւականապէս չեն ցուցնէր թէ ատեն մը (որ երկրաբանօրէն շատ հին չէ) ներէիդաց<sup>1</sup> իշխանութեան տակ էին . և իրենց բրածոյ ժամակաց մնացորդքն, որոց կենդանի նմանիքն դեռ գտուին կասպիական ծովու մէջ, չեն կարծեցրներ արդեօք թէ երբեմն ծով մը կ'երկընցընէր իր ծաւալժփիկ բազուկները առ ուրիշ ծով մը՝ այն երկրին վրայէն, որ յետոյ եղաւ խանձարուրք մարդկութեան և հայրենիք հայութեան : Տեալք իմ, ես ոչ երկրագէտ եմ և ոչ հաւադէտ, բայց կը հաւանիմ թէ այդքան բազմութիւն եռակենցաղ կենդանեացդ (թռչնոց) որք մեր երկրին բարձրաւանդակ աւազանաց վրայ սփռեալ են, ոչ միայն բնապատմութեան ուսումնական ապացոյց մ'են, այլ և յիշեցուցիչք ջրհեղեղի և ստեղծագործութեան :

Դառնանք առ ուրիշ դաս մը կենդանեաց : Աեռք հայկական քառոտանեաց նախայիշեալ դասին պէս բազմատեսակ չեն . երկրին կլիմայն այլ այս բանս կ'իմացընէ : Բայց այսպէս ըլլալով դեռ ոչ շատ հին ժամանակ գտուէին ՚ի Հայս ամենէն կատաղի գաղանք ալ . ո՞վ ոչ յիշէ Վ իրգիլիսի գեղեցիկ տողը<sup>2</sup>,

« Եւ վագերըս հայկական՝ ուսոյց Դափնիս  
լըծել կառաց » :

կամ Սիգանիոսի ըսածն<sup>3</sup> .

« Ընդ վագրաբեր Կրպատայ կապարձաւոր արտորայս » :

- 1. Ջրոց պահապան չաստուածք, կամ Զուրք :
- 2. Ե. Հովուերգութիւն :
- 3. Բ. Երգ. Սիգանիոսի եպիսկոպոսի Գլերմնայ :

1. Քանի մը հայ ջրհաւուց անունք ալ յիշենք և ինդրենք որ գիտունք մեզի ծանուցանեն . Հեախ, Կլիսուկ, Արատիլի, Արուաւազգահաւ, Բոհաննահաւ . ուրիշ ցեղերէ, Տուռէճ, Դահուճ, Դեզնուկ, Պարկօշ, Սանդրայոպոպ, Ձիական, Խիւ, Ճղարդ, Հօտօտ, Կոտօտ, Դուռն, Ապոնեկ, Կուռար, Կատար, Կատակ, Լայլն :

ԴուռնըՔոր այլ Սասիս լերանց պատառուածներուն մէջ տեսեր է Վաֆր : Իսկ կենդանեաց թագաւորը , Առի-ծը կու յիշէ 'ի Հայս Բայետիոս<sup>1</sup> , և մեր պատմիչքն Դ և Ե դարուց , և ուրիշ մ'այլ որ ժ դարուն սկիզբները կ'ապրէր : Բնատի-ծն և յովան ինչուան հիմա կը գտնուին : Թողունք յիշել ուրիշ գազանները , և գազանամարտ գազանը , այսինքն շանը , որուն ցեղէն կան մեծամեծ և ուժով տեսակք . չմունանք միայն երկայնամազ կաթուն Սանայ , որ Բնկիւրիոյ կատուէն վար չիմնար , և ճերմակ ու սևատուտն ափսը , զոր Լատինք առմէնիոս կոչէին ( փռանկը Էրմին , hermine ) , և այդու կոչմամբ կ'իմացընէին թէ որ երկրէ առին ու մուսցին յԱւրոպա :

Բնտանի անասունք բարեբաղդաբար շատ բազմութիւ են 'ի Հայս . վերը յիշեցինք ոչխարաց առատութիւնը . նախրէից ցեղին մէջ գոճէն բնիկ կ'երևայ Հայաստանի , որովհետև իր էգը յատկապէս ճափակ կ'ըսուի , որ ամենայն չորքոտանեաց էգը նշանակէ հասարակորէն : — Երէւայրին կամ որսի կենդանիք աւելի առատ են . հնագոյն դարերէ 'ի վեր՝ շրջաբնակ իշխանք և ազնուականք կու գային ամէն տարի 'ի Հայաստան 'ի կրթութիւն և 'ի զբօսանս որսոյ , ուր գտուին տեսակ տեսակ վիթք , այծեմունք և եղջերօք . որոց կարօտով կու բաղձայր նաև մահուան անկողին մէջ՝ Բրտաշէս , մեր հեթանոս թագաւորաց մէկն , և հառաչէր . « Ստայր ինձ » զծուխ ծխանի և զառաւօտն նաւասար » դի , զվազելն էղանց և զվազելն եղջերուաց . մեք փող հարուաք և թմբկի » հարկանէաք » : Նիշենք զվարացն այլ , որ ինչուան հիմա Բարարատայ մէջ և նոյն իսկ Սասեաց ստորոտը կը գտնուի , Թա-

<sup>1</sup> Ի Ե Դարու : — Ըստ յոյն և լատին հեղինակաց նպատ լեռն ոչ է մեր բնիկ նպատն Բագրեանդայ , այլ կամ Պինկէօլ լերինք և կամ հայկական Տաւրոսի պարն . որոց բնակիչք ըստ մտաց Սիգոնիոսի քաջ ազնուաւորք միշտ կապարճնին ուսերնին զարկած կը պտրտէին :

<sup>2</sup> Եւրոպայի բժիշկ Բոյն կամ Հայ , 'ի վերջ Դ դարու :

Թարաց մշակած բրնձի անդերը կ'աւրըտորկէ . և երագավազ ջիւր ( իշավայրի ) որ հալածեալ յԱրտաւազայ յորդոյն Բրտաշիսի , զինքը ետևէն ձգեց ինչուան նոյն աշխարհածանօթ լերան վիհը , ուր , ըստ առասպելեաց , թշուառ թագաւորն Վաջաց ձեռքով կապիրպած կու ջանայ կոտորելու իր երկաթի շղթաները , զոր անդադար լիզելով մաշեցնէն իր հաւատարիմ շուներն . մազ կու մնայ որ բարկաճայթ թագաւորն ազատած ցատքէ այդ մթազին քարայրէն դուրս բոլոր աշխարհքս աւրելու , բայց դարբնաց կռաններուն և ուրիշ գործաւորաց գործեաց ձայնն նորէն կու հաստըցընէն իր մաշած շղթաները :

Վրաստեղէն կենդանիք հաշակուած են նաև մարգարէի մը բերնով , իր Տիւրոսի դէմ ըրած սպառնալից ձայնարկութեանը մէջ . « Ի տանէ Թորգոմայ » ձիովք և հեծելովք և ջորուովք լցին » զվաճառս քո » : Երգեկիէլ ( ԻԵ . 14 ) չիյիշէր ուրիշ ցեղակից գրաստ մ'ալ , աւելի պզտիկ և աւելի անպարծ , բայց ոչ պակաս պիտանի , մանաւանդ 'ի լեռնոտ երկիրներ , ինչպէս է մեր Սոկաց աշխարհն , որոյ իրեք գաւառք իշոյ անուամբ կը կոչուին : Իսկ մէկալ կէս արուեստահնար կենդանին , ջորին , բնականապէս աւելի յարգի էր . մանաւանդ ճերմակ ջորին , զոր արևու զոհ ընելու և թագաւորաց ծառայութեան համար կ'ընտրէին . ինչուան նաև թագաւորաց յուղարկաւորութեան համար այլ զայն գործածէին . մեծին Տրդատայ սկէզօծ դազազը կրող կառքն ճերմակ ջորիներէ լծուած էր . ճերմակն , գերագոյն գունոց սեպուած , մեր թագաւորաց մահուան հանդիսին մէջ այլ մտներ : Բայս քաղաքս այլ , ուր խօսիմք , այս հանդէսներուն վերջինը տեսաւ . Բարիզ ակնատես եղաւ 1393ին յետին Հայոց թագաւորին , Զ Լէոնին մահուան և թաղմանը . իր դազաղաց մահիճն այլ ճերմակ բեհեզ էր , իր ծառաներն ալ ճերմակ հագուած , տարին իջուցին զնա կեղտոտիսեանց եկիզեցւոյն ներքնայատակ տապանատունը :

Իայց ահա ազգիկ գրաստական ցեղին թագաւորն, զոր ձեր ամենէն պերճախօս բնապատումն անուանեց՝ « գեղեցկագոյն իստացուածս մարդկան », և զոր մեր ազարակային արուեստին կամ վաստակոց գրոց հեղինակն կոչէ, « Լթու թագաւորաց և պարիսպ ամրութե հեծելու », յաղթահարող թշնամեաց և նաւահանգիստ ճանապարհորդաց, հալածիչ գաւառաց, զղրդեցուցիչ քաղաքաց և լայնացուցիչ սինսուաց : Իայց ով է առաջին կտրիճն՝ որ այդ գեղեցիկ ստացուածն ըրաւ : Եւ չեմ հարցըներ Յովբայ, եթէ « Դու ագուցեր ձիոյ », զօրութիւն, և զգեցուցեր զահ ընդ պարանոցաւ նորա », այլ կու հարցընեմ, ոչ առանց քիչ մի պարծենալու. ով է որ ամենէն առաջ կրցաւ սանձ անցընել այն կենդանոյն, որ երբեմն փորատող հրաբուխ դառնայ, երբեմն քծնող ընկերակից : — Սեր պատմութիւնն, (եթէ կ'ուզէք աւանդութիւն սեպեցէք զայն, թէ կ'ուզէք խորհրդաբանութիւն, ինչ այլ կ'ուզէք սեպեցէք), մեր պատմութիւնն կ'ըսէ, թէ աշխարհքիս առաջին պատերազմին մէջ, յետ խառնակութեան լեզուաց, մեր ազգին նահապետն և զօրավարն, Հայկն, ձիաւոր պատերազմող այլ ունէր ընդդէմ Իսրայ. ասիկայ այլ յաղթուած և մեռած՝ յաղթողին ձեռքը թողուց ձիոց, ջորեաց և ուղտուց երամակներ : Չին եղած է և է իսկ հիմա ալ Հայաստանի ամենէն նշանաւոր բերոց մէկն, և իր փառաց գործիք մը. մեր ազգային զինուորութեան ոյժն գլխաւորապէս հեծելոցը վրայ էր. Լրամ Հայկայ սերընդոց մէջ ամենէն հզօրն, ժամանակակից Լինոսի, 40,000 հետևակաց հետ 2000 ձիաւոր ունէր. ժամանակն փոխեց այս համեմատութիւնը. 12 կամ 14 դար վերջը Հայաստան կրնար, ըստ վկայութեան Եզեկիելի, իր պէտքը լեցընելն զատ ինչուան Տիւրոսի վաճառքներուն ալ զրկել ձի և ձիաւոր, երկուքն այլ անուանիք ՚ի հին ժամանակս : Կոյն մարգարէն ուրիշ խօսքով մը գրեթէ զմէզ կ'ապահովէ թէ Լսորեստանեայց

բանակը յաղթութեան տանողը Հայոց հեծելագունն էր. Հայ ձիաւորք ձաւատեցան Տրովայ դաշտերուն մէջ ծերունոյ Պրիամու վերջին օրդոց հետ ընդդէմ քաջաց հոմերական Յունաստանի : Լքեմենեան (Պարսից) տիեզերակալութեան ատեն Հայաստան կուղրկէր թագաւորաց թագաւորին ամէն տարի միհրական տօնին 20,000 ձի, որ ընտրելագոյն սեպուէին քան զՊարսիցն և զԵլարաց. և 50,000<sup>էն</sup> աւելին ժողովք տարւոյն յարմար եղանակին կը ժողովէին Սուղանու դաշտերուն մէջ : Սեր թագաւորաց մէջ ամենէն աշխարհակալն և ամենէն գոռոզն և հպարտ, Տիգրան, ըստ բանից օտար պատմաց ինչուան 150,000 ձիաւոր ունէր, զատ 17,000 բոլոր սպասազէններէ, այսինքն ձի և ձիաւոր բոլորովին զրահով ծածկեալ, զոր պատմիչ մը կը նմանեցընէ զրահամորթ կոկորդիլոսի : Լրձակ դաշտի մէջ այս սպառազէնքս ձարտար առաջնորդի մը ձեռք՝ գրեթէ անյաղթելիք էին, բայց նեղ տեղուանք՝ թէ իրենք իրենց արգելք և թէ իրենց ետևը շարուած գնդերուն. այսպէս Տիգրանայ բիւրաւորներն ընկրկեցան զարնուեցան Լուկուլլոսի զօրքերէն, որ հնարագիտութեա զանոնք թերմոպիլեան նեղուցի մը մէջ փակեց : Հիմա Վիւրտերն որ Հայոց ժառանգութիւր կը վայլէն և կը վատնեն, տարուէ տարի 50,000<sup>էն</sup> աւելի ձի կը վաճառեն Պարսից և ( ) ամանեանց : Հայկական երիվարն, հին ատեն ամենէն աւելի ծանօթ եղած կ'երևայ, յետ տաճիկ (արաբացի) ձիոյ. մէկ հին և անանուն յոյն հեղինակ մը նկարագրութիւն մը ընելով ձիոց ըստ աշխարհաց, նախ և առաջ կը յիշէ հայկական երիվարը, և կը ճանչնայ զայն բաւական յաղթանգամ և շատ ուժով, ողնալայն և պնդակող, և Յովբայ ձիոյն պէս սաստիկ խրինջացող : Հայկական երիվարին հետ կը յիշէ ըզփոխագացին. և այս երկու ձիոց ազգէն սերած կը համարի դալմատացի երիվարը : Ինչուան հիմա այլ հայկական ձին թերևս նախապատիւն է յետարա-

բացի և անգղիացի ձիոց . յիրաւի չունի ոչ ասոնց հասակը և ոչ վայելուչ ձևը , աւելի պղտիկ և աւելի թանձրամիս է . բայց երազութեամբ անոնցմէ վար չի մնար , և անոնցմէ աւելի պատուական է վարժութիւն ելլելու և իջնելու լեռնոտ և անհարթ երկիրներ . պատերազմական դաշտին վրայ սր և էցեզ ձիու գէմկրընայ ելլալ . և իր աչքերէն ցատքած կրպարանման սև կրակը տեսնուին կարծէ թէ կուռող կենդանեաց մէջ գազանագոյնն է : Ինիկ հայկական ցեղից մէջ Խնուսի ձին ամենէն գեղեցիկն է . կը կարծուի այլ որ Նիպէա անունն , որով կ'անուանէին Նոյնք լաւ ձիաբեր երկիր մը , այս տեղւոյս անունէն ծագած է . մեր մէջ քաջ վազուկ ձին Վժոյգ կ'անուանի , մօտ Վիզէա անունն : Նիւսի սային Նայոց երիվարքն ալ լաւ , ուժով և աղուոր են . այնպէս որ անոնց ամենէն հասարակներն այլ , կ'ըսէ գերմանացի բնագէտ ճանապարհորդ մը , կրնան Շուդկարտի արքունի ախոռոց լաւ . գայն ձիերուն կարգը զրուիլ , և խրատ այլ կու տայ յԱլբրոպա մտցնելու Լարզիրումի , Տրապիզոնի և Վրեստի ձամբով : — Ինուժիւնն որ այսպիսի գեղեցիկ կենդանի մը ընծայեր էր երկրին , անոր ստացողին այլ հանձար տուաւ զանիկայ աղէկ վարժեցնելու և աւելի աղէկ այլ ՚ի գործ ածելու . ձիագարմանու թեան արուեստն շատ կատարելագործած էր մեր նախնեաց օրերը . որուն կրնան վկայ ըլլալ քանի մը լատին հեղինակաց բանք , և մնացորդք ազգային ձիագարմանութե գրուածոց , որոց մէջ մանրամասն անդամաբանութիւն կայ ձիոյ : Իսկ ձիոյ գործածութիւնն , Նայոց ազնուականաց և պատանեաց զբօսանք , ցուցանք և պարծանք մ'էր . մեր իշխանաց կտրիճ զօրավարաց մէկն , քաջակորովս Սուլէղ , հացկերութի մը ատեն դաւաճանութի սպաննուելով , վերջի շունչը տալու ատեն կը ցաւ էր կ'ողբար որ չկրցաւ մեռնելու իր ձերմակ երիվարին վրայ , որ այնքան անգամ տարեր էր զինքը յաղթութեան . գոռոզ թագաւորն Շապուհ որ այս կտրիճ զօրավարին

ձեռքէն այլ սրտէն այլ յաղթուեր էր , հրամմեր էր որ քարի վրայ քանդակեն անոր պատկերը ձերմակին վրայ հեծած , և իր խնջոյից տաճարին մէջ կանգնեն , զոր տեսնալով արևուն գինի խմէր , Վարի ձերմակաձին , ըսելով : Շատ ատեն չէ որ գտնուեցաւ ուրիշ քանդակ մ'այլ մեր երկրին վերջին սահմաններուն վրայ , նոյն քաջակորովը կերպարանելով իր ձերմակին վրայ , թէ և զրոնող ճանապարհորդն չի ճանչցաւ իր գիւտը : . . . Իայց մեր ձերմակն , մեր պիգասուքն՝ զմեզ շատ հեռու կը թրոցընեն . բաւական ըլլայ այսչափ տեղեկութիւն թէ իրենց համար և թէ բոլոր մեր երկրին գործարանաւոր և անգործարան արարածոց :

Ե

Շնորհակալ ըլլանք ուրեմն բնութե , որ այսքան պարգևներով հարստացուցեր է մեր երկիրը , և սառաւել փառք տանք տիրոջն բնութեան , որ այդ պարգևները վայելել և յարգել տուաւ երկրին հանձարամիտ բնակչին , որ ՚ի սկըբանց ժամանակի գիտցաւ ճարտարութեամբ օգուտ հանել անոնցմէ , և օտարաց այլ սփռել , հեռաւոր աշխարհքներու բերքերը իրարու պսակելով : Նայն ամէն ատեն եղած է վաստակասէր մը շակ իր երկրին մէջ , ժիր վաճառական դուրսի երկիրներ , զգօն գործակալ ազգաց՝ որ զիրար չէին ճանչնար , և փոխանակեր է զբնական և զարուեստական բերս աշխարհաց՝ որ իրարմէ հեռու էին շատ միջօրեական ժամերով . բոլոր երկրիս երեսը կը պտըտէր , կը սորվէր զլեզուս ժողովրդոց՝ որոց թարգման կ'ըլլար , և ամէն տեղ միտ դնելով կը սովորէր շահ և ճարտարութիւն : Իրեն համար օտար երկիր չկար և չկայ . և ամենայն ազգք իրմէ յիշատակ մը ունին : Թէ որ լաւ մտադրութեամբ քննուի ազգաց չունց կամ բաժանման պատմութիւնն , ինչպէս որ Ս . Վիլք

1 . Ըստ առասպելաց Յունաց թեաւոր ձի Պերսէոսի գիւցազին :

մեզի կը ներկայացընեն , յայտնապէս կ'երևայ որ Միոյ հիւսիսային և արևմըտեան կողմերն և բոլոր Արոպա իրենց բնակիչքը առած են այն գաղթականներէն որ ելան կամ անցան 'ի Հայաստանէ , յառաջ և յետ իր Հայաստան կոչուելուն : Թէպէտ և հիմակուան քննադատութիւնն տարբեր կարծիք ունի լեզուաց ծագման և ածանցման վըրայօք , սակայն արժան է յիշելու , որ թէ ժողովրդեանը համար թէ անոր լեզուին համար չկայ երկիր մը որ մեր երկրին հաւասար այնքան բաղդատութեանց և նմանութեանց առիթ եղած ըլլայ : Այսեւ յԱրդոտէ , 'ի Սորաբոնէ և յԱւստաթեայ՝ հարցուցէք ամէն լեզուագիտաց և բանասիրաց , որպիսիք են Մքթութոս , Շուարց , Պոշար , Ալամէդ , Հերվաս , Մագրոզ , Ախազն , Այպսից , Ալպրիկանս , Շրէտէր , Հէէրըն , Ն. Սիլիէմ , Մնգըդիլ , Սալլաս , Վլաբրոթ , Մտելունկ , Պօթ , Սոդ , Սեդէրման , Ախտիշման , Արդգերէր , Սիպուր , և այլն , թէ ո՞ր լեզուին նմանակից է Հայերէնն : Մէնքն մէկմէկ կերպ պատասխան կու տան , հայերէնին մերձաւոր և ազգակից սեպելով փոխգային , ասորին , բաբելոնացին , քաղդէացին , հրեայն , թաթարը , կովկասեան-թուրքը , խազախը , պարթևը , փէհլէին , զանգիկը , հնդկա-գերմանացին , մարապարսացին , հին յոյնը կամ պելասգեանը , եգիպտացին և զպտին , կելտը և ուելլը , ինչուան պիսքայացին , ֆինը և սիպերիացին : Արդ 'ի վերայ այս ամենայն խառնափնդորութեան վհին՝ ուսկից կ'ուզեն հանել զհայերէնը , մանաւանդ թէ հայերէնէն հանել այս վիհը , 'ի վերայ այս ամենայն աւելի կամ պակաս ծուռ կարծեաց , պէտք է որ այդ վհին խորը ճըշմարիտ և սկզբնական բան մը ըլլայ , ապա թէ ոչ անկարելի կ'ըլլայ հասկընալ թէ ինչու և ինչպէս այդքան ծանր և գիտուն անձանց գլուխք պտրտեր են այդ վհին վրայ : Այս այլ պէտք է լաւ գիտնալ , որ եթէ Ս. Վիրք , պարսիք և աւանդութիւնք կու ցուցընեն մեզի

զհայաստան իբրև սերմնարան մը ազգաց և ցեղից , նոյնն Հայաստան զարմանալի ընդդիմակութեամբ մը հիւրընկալ և օթեան եղած է զանազան ազգաց գաղթականներու , ինչպէս են ասորեստանեայն , քաղդէացին , հնդիկն , հրեայն , քանանացի , սկիւթացի , կովկասեան , թեսաղացի , յոյն , մար , պարսիկ , և ինչուան չին այլ : Այս ամէն տոհմք նախ քիչ կամ շատ ատեն մը իրենց օրէնքը և լեզուն զուտ պահելով , յետ քսան և հինգ դարուց խառնուեցան և ընկղմեցան տիրող ազգին և լեզուին մէջ , այսինքն հայերէնին , որ 'ի հարկէ ինքն ալ քիչ մը անոնցմէ փոփոխութիւն կրեց և անոնց բերքերովն հարստացաւ : Արիստոնէական կրօնքն սրբազան և անդրժելի ըրաւ երկայն դարուց աշխատանքը , և այդքան տարբեր տարբերքներէ ձևացուց մէկ ազգ մը , որ 'ի սկիզբն Գ դարու կը պարունակէր անընդմէջ երկիր մը հիմակուան Փռանկաստանի սահմաններէն ընդարձակ , և բաժանեալ 'ի 20 նախարարութիւնս կամ պայազատական աշխարհս , որք բաժանէին 'ի 620 գաւառս , և ասոնք այլ 'ի հարկէ 40,000 գեղ մը ունէին , որոց պահպանութեան համար սովորաբար 120,000 զօրականք կային , և հոգևոր հսկողութեան համար աւելի քան զ200 եպիսկոպոս : Այս դարէս ետև՝ 1500 տարուան միջոց մը բոլորովին այլափոխեց մեր երկրին օրէնքը և երևոյթը , որ կրեց բաղդին ամէն հարուածքը և խաղերը . նոր ժողովուրդք եկան դըրաւեցին զհայաստան , ուր հիմա այլ կ'երևան որոշակի . վասն զի կրօնքն և լեզուն անթափանցելի պարիսպ մը ձգելով մէջերնին , օտարականին թողուցին հայաստանին գետինը , պահելով միշտ տեղացւոյն իր սիրելի հայրենիքը : Ասանկով , թէ և հեռացեալ թէ և հաւածեալ իր բնիկ երկրէն , հայն իրեն հետ կրէ իր թերափքը . և կը մնակէ զհայրենիս իր հարուստ լեզուին մէջ , կը յարգէ զայն իր կրօնից մէջ , կ'ուսանի անոր յիշատակաց մէջ , և կը պաշտէ զայն իր սրտին մէջ : Այս հայրե-

նասիրութիւնս, 'ի բաց թողլով ոմանց մոլորիլը և ոմանց անհոգութիւնը, առաջնորդեց անցուց Հայոց ազգը 44 դարու միջոց՝ ամէն տեսակ դիպուածէ, բնութեան և քաղաքականութեան յեղափոխութիւններէ, ընդ մէջ ազգաց որ իրմէ վերջը ծնան և իրմէ առաջ մեռան: 'Կարձուցէք դարձեալ անգամ մ'այլ աչուրնիդ այդ լեռնակղզի երկրին վրայ, որ կը բարձրանայ 'ի միջոց եւբսինեան և կասպիական ծովուց, պարսկային ծոցոյն և միջերկրականին, որոց մէջ թափէ զայլիս Փիսոնի, Լիւսեայ և Իռիսայ, Կուրի և Լարասիայ, Տիգրիսի և Լփրատայ, Պիւռամիսայ և Կիւզնոսի. փնտռեցէք ատոնց ամայի աւերակ փանց վրայ ազգաց և ազանց գոռոզ մայրաքաղաքները, և ըսէք ինձ. ո՞ւր են Լինուէ և Լաբելոն, Սելեկիա և Տիգրոն և Սամառա. մանաւանդ թէ ըսէք, ո՞ւր են ատոնց կանգնողքն, այն հզօր և անուանի ժողովուրդքն հին դարերու, Վաղդէացիք, Լսորեստանեայք, Սարք, Պարթևք, Կապադովկեցիք, Արիկիացիք, Լիւդացիք, Կարբեդոնացիք և ուրիշ շատեր: Հարցուցէք մէկ հինաւորաց մարդու մը, որ անոնց ամենէն ուժով, ծաղկեալ և յաջող ժամանակը ապրելով, կը նշմարէր անոնց կործանումն այլ. հարցուցէք Լազեկիելի, ո՞ւր են այդ ազգերն՝ « Արք արկանէին զահայիւրեանց 'ի վերայ երկրին կենդանութեան », Լ՛ւաղ. ահա կը ցուցնէ ձեզի երկրիս խորը, անդունդը, ահաւոր լիճ մը, ոչնչութեան տեղ մը և կ'ըսէ. « Լ՛նդ Լ՛սուր և ամենայն ժողովք նորա, ամենեքին վիրաւորք... շուրջ զշիրմօք նորա... Լ՛նդ Լ՛լամ և ամենայն զօրութիւն նորա շուրջ զգերեզմանաւ նորա... անդ տուան Ս՛ուտք և Թ՛ուրէլ և ամենայն զօրութիւն նոցա շուրջ զգերեզմանաւ նորա... անդ Լ՛գովմ և ամենայն թագաւորք իւր և ամենայն իշխանք նորա... և նոքա ընդ վիրաւորս ննջեցին ընդ իջեալսն 'ի խորխորատ », :... 'Կաղրէ 'ի սպառնալեացդ, գուժաւոր մարգարէ. միթէ պիտի յանդրդնին ըսելու այլ,

թէ « Լ՛նդ ամենայն իշխանք հիւսիսոյ, և ամենեքեան նոքա զօրավարք Լ՛սուրեստանուոյն, իջեալք վիրաւորք հանդերձ ահիւն զօրութեամբ իւրեանց... և տարան զտանջանս իւրեանց ընդ իջեալսն 'ի խորխորատ », : Ընս տեսներ, որ ինչպէս այն ալիքներն որ տեսան այդ ազգերը իրենց փանց վրայ, կը կորսուին խառնուին անկուշտ ծովուն մէջ, մինչդեռ իրենց աղբիւրներն անդադար կը բղխեն նոյն բարձրաւանդակներէն, այսպէս և ազգն Հայոց որ ունէր իր երկիրը այդ աղբերականց մէջ, հոն կենայ դեռ, մինչդեռ մէկայլ ազգերն ոչնչացեր են 'ի վիրապն ժամանակի: Հիմա սովրէ՛ մեզմէ, ո՞վ մարգարէ, վասն զի մենք առանց քօղոյ կը տեսնամք ինչ որ դու 24 դարու թանձրութենէն կը տեսնայիր. մեզմէ սովրէ՛. այդ իշխանքդ հիւսիսոյ և արևելից, այդ զօրավարքդ Լ՛սորեստանուոյն ոչ մեռան ինչպէս Լ՛սուրն և Լ՛լամ. ողջացան, ապրեցան սրոյ հարուածներէն. գերեզմանն չի կրցաւ կլանել իր ամէն փափազածը. և Հայն մինակ մնացած քու համրած ժամանակակից ազգերէդ, ինքնին կը հսկէ իր նախնեաց գերեզմանին և իր յետնոց սրորոցին քով: Հայն ժողովուրդ ազնուասիրտ, ժողովուրդ հիւրընկալ, ժողովուրդ հաւատացեալ, շատ ժողովրդոց օգտակար եղաւ. և եթէ երբեմն իբրև պատերազմող՝ նիզակակցելով Փուղայ և Սաղմանասարայ 'ի գերութիւն քչեց Վարայէլ, գոնէ պաշտպանեց այլ զանոնք իր գետափանց վրայ և 'ի բարձունս Լ՛ումնայ (կամ Ալեմանայ<sup>1</sup>). և թէ դաշնակից ըլլալով՝ Վաբուքողոնոսորայ, գերի վարեց զիշխանս (Յուգայ, սակայն պատուեց այլ զանոնք իր իշխաններէն աւելի. վասն զի ճանչցաւ թէ անոնք Ղաւթի և Սողոմոնի որդիք են, և անոնց ձեռքով կ'ընդունէր զլիսին ճառագայլթաձև թագը, զոր յետոյ նոյն իսկ իր գերւոյն գլուխը դրաւ. և եթէ ստիպեց երբեմն (ինքն այլ ստիպեալ ըլլալով) զորդիս և զգետերս Սաղեմայ՝ բաբելական ուռնեանց ներքև

1. Ամով:

արտասուածաց քնարներու վրայ երգել Վիտի սաղմոսները, սակայն խուլ չեղաւ Մտուծոյ ձայնին՝ որ ուրիշ մարգարէի մը բերնով կ'ըսէր իրեն. «Պատուէր տուք յինէն այրարատեան թագաւորութեանցն և սաքանազեան գընդին. կանգնեցէք զնովաւ (զՏաբերոնի) նետակալս, ելէք ՚ի վերայ... երկվարք, իբրև զբազմութիւն մարտոյ<sup>1</sup>, և փութաց վազեց Մտուծոյ օծելոյն, և իր նիզակակցին հետ (կիւրոսի), և յետ եօթանասուն տարւոյ իր Կերեայ շղթաները քակելով, ինքնին առաջնորդեց տարաւ զՍողաթիէլ և անոր ժողովուրդը և անցուց Հայաստանի և Սիլաքետաց սահմաններէն, և ողջ անվնաս պահելով թշնամի ժողովրդոց միջէն հասուց ՚ի Պաղեստին<sup>2</sup>։

Հիմա կը հասկընաք, պարոնայք, թէ Հայաստան կրնար մարգարէից սպանալիքներէն այլ ազատիլ. վասն զի ինքնին նախախնամեալ երկիր մ'էր Հայաստան և սիրելի բարձրելոյն, ուր շատ կանուխ յայտնեցաւ. և պէտք է որ ամենայն ազգ որ իր ծագումը կը փնտռէ՝ դառնայ այդ երկրին նայի։ Արեւմտայ հետքը գտնելու ապահովագոյն ճամբայն է Հայաստան։ Ինքն ընծայեց Մտուծոյ իր օրհնեալ կաւը, և ընդունեցաւ անոր ձեռքէն զհայրն և զմայր մարդկութեան. ինքն ընծայեց ասոնց այլ ինչ որ պէտք էր իրենց պահպանութե, իրենց սիրոյն և զզմանը համար. ինքն եղաւ խանձարուրք առաջին ծնածին և ցերեզման առաջին մեռնողին. ինքն բարձրացուց Մարատայգաթաթը միւս անգամ ընդունելու ջրհեղեղէն ազատած մարդկութեան մէկ հատիկ տունը. և այդ իրեն հիւր եղած մէկիկ ընտանիքով երկրորդ անգամ բոլոր երկիրս մարգարնակ ըրաւ։ Ինքն կերակրեց առաջին նահապետները, և անոնց հաւատքը անխառն պահեց երկար ատեն. Մերահամ ինքնին նոր հայրն հաւատոց՝ իրմէ ծագած է, վասն զի իր հայրենիքն՝ Ռէր Վաղդէացոց՝ հիմա կը ճանչցուի

Հայոց յետին պատուարներուն մէջ, լերանցն կորդուաց, որ Սեծաց Հայոց տասնևհինգ աշխարհաց մէկն է։ Արջապէս, ինքն, ըստ բարեպաշտիկ աւանդութեան, կ'աղաչէր զՍտուս առաքելոց գլխաւորին հետ՝ որ զգուշանայ ՚ի նենգութենէ հրէից, և գայ իր թագաւորին, Մագարայ հետ՝ ապաստանի Արեւսիա։ Ինքն ընդունեցաւ ուրիշներէ աւելի առաքեալներ և աշակերտներ և ընծայեց անոնց զառաջին կոյս վկայութիւն, նոյն իսկ իր թագաւորին դուստրը, զոր կ'ախորժեմ անուանել քոյր Մարի. վասն զի սոքա են նախավկայք, մէկն նախնական աշխարհի, մէկայն նորաստեղծեալ աշխարհի. մէկն զօհեալ իր եղբորմէն՝ մէկայն իւր հօրմէն. ո՞վ աստուածային ողբերգութիւն Սոյն ինքն Հայաստան յետ իրեք դար տնտնալու, դարձեալ յառաջ քան զուրիշ ազգեր՝ բոլոր ժողովուրդովը ընդունեցաւ զքրիստոնէական կրօնս և պահեց միշտ. և որ զարմանալին է և ծանր ընդդիմեւելոյթ մը, քրիստոնէութեան առաջին պատուարն ըլլալով՝ ամենէն ետքի պատուարն այլ է երկրիս արևելակողմը, վասն զի այդ կողմէն Հայաստանի միջօրէէն անդին քրիստոնէայ երկիր չկայ, բաց ՚ի գաղթականներէ կամ քարոզչաց ձեռքով նորադարձներէ, որք կրնան նորատունկը ըսուիլ ՚ի մէջ հեթանոսաց։ Մտեն մը իբրև կղզի մ'էր, հիմայ իբրև թերակղզի մը քրիստոնէութեան այլահաւատ կրօնից մէջ։

Մյս ճշմարիտ կրօնից զգացմամբ, այս գերադոյն զգացմամբն է՝ որ Հայաստան ոչ միայն կրցաւ մնալ և դիմանալ իր ինքնագլխութիւնը կորսնցրնելէն վերջն այլ, հապա նաև կրցաւ ամենէն դժուար գործ մ'այլ գործել. այսինքն համաձայնել իրարու զահախնդրութիւն երկու աշխարհաց՝ որոց մէջ դրեր է զինքը նախախնամութիւնն. և եթէ երբեմն այս բարակ և դժուարին պարտուց մէջ պակսած է, աւելի ինքզինքը խաբած է քան զուրիշները։ Մպա և ոչ առանց արդեանց վաստակեր է զյարգ և համարմունք և վստահութիւն

1. Երեմիա։  
2. Թովմա Արծրունի ըստ Մար Իբասայ։

տիրող և սահմանակից ազգերուն . ինքն  
տուեր է զօրք և կտրիճ զօրավարներ  
Սասանեանց և Ռիզանդացոց , և իր  
ճարտարագոյն օրդիքները բազմեցու-  
ցեր է իբրև ինքնակալ Վոստանդիանո-  
սի գահուն վրայ , և փոխարքայ Վրիպտո-  
սի և Հնդկաստանի տիրապետաց քով .  
զանազան հնարքներով Ղրաբացոյն  
սուրը բթացուցեր է , և իրեն սովրեցու-  
ցեր զանազան օգտակար արուեստներ ,  
որոնց հետ ճարտարապետութեան ոճ՝  
մ'այլ , որ քիչ մը ձևափոխեալ ուրիշ հե-  
ռաւոր աշխարհաց մէջ այլ մտաւ . Սու-  
րոպա անգամ առանց իմանալու առեր է  
զայն : Հայաստան Վոփրետոսի Վրաչա-  
կրայ նիզակակից եղած զԱրուսողէմ  
առաւ . Հուլաղունի Վետողաց դաշնա-  
կից՝ զՊաղտատ առաւ : Այսակաւ պաշ-  
տօնեաներ և քաջանշան զօրավարներ  
ընծայեց օսմանեան , ռուս և պար-  
սիկ տէրութեանց , որոց իշխանութեան  
տակ հիմայ բաժնուած է երկիրն . և  
դեռ նոր նոր մէկ դժուարակնձիռն պաշ-  
տօն և աթոռ մը , Սողոմոնի և Վիրա-  
մայ հին սահմաններուն վրայ , տրուե-  
ցաւ իր զաւակաց մէկուն , որուն մաղ-  
թեմք ամենայն կարևոր իմաստութիւն  
առ 'ի փարատել հին և նոր նախանձներ  
և առ 'ի միաբանել ծանր ծանր շահա-  
խնդրութիւններ և օգուտներ : — Իր  
ճարտարարուեստ գաղթականաց ձեռօք  
շատ օգտակար ծառայութիւն ըրած է  
Ռուսաց , Ահաց , Ղստորիոյ և Ղա-  
նուբեան իշխանութեանց , և իր վաճա-  
ռականներովն՝ միջին դարու Խապիւրոյ ա-  
մէն տէրութեանց , Սպանիոյ , Հոլան-  
տիոյ և քանի մը տէրութեանց այլ  
որ հիմա Փռանկաց կայսերութեան  
մասն են . Ղյս ետքինիս մայրաքաղաքն  
իսկ , արևմտից Ղաբէլանն , մէկ Հայու  
մը երախտապարտ է իր ամենէն շատ  
յաճախած ընկերութե տեղւոյն սկզբ-  
բնաւորութեանն համար . Ղարիզու  
մէջ առաջին քաֆէարանը բացուեցաւ  
յամին 1672 Սէն Ղեբմէնի տօնավա-  
ճառին մէջ և Ղպրոցի ըսուած գետա-  
տափին վրայ ( Quai de l' Ecole ) 'ի ձեռն  
Հարութիւն կամ Ղասգալ անուան ,

երկրորդն ալ Ստեփան անուն մէկէ մը ,  
որք երկուքն այլ Հայ էին . անշուշտ ի-  
րենք չէին նախատեսաներ թէ իրենց  
ձեռնարկութիւնն զարգանալով՝ ինչ  
բարիք կամ չարիք կարենայ պիտի բե-  
րել . բայց կրնային յուսալու որ այդ նո-  
րութեան համար իրենց շնորհակալու-  
թեան յիշատակարան մը ընծայեն ըզ-  
բօսասէրք :

Իսկ ինձ նախամեծար և ախորժելի է  
նկատել այն լուսաւոր նշանները՝ զորս  
Հայաստան իր հորիզոնէն դուրս այլ  
սիւռած և զրած է երկնից այն կողմերը  
որոնց տակ իր օրդիքն ապաստանարան  
մը փնտռէին . և կը սիրեմ պատուել  
( Ուլէանի սահմանին մէջ զԱ ) . Ղրիգոր  
արքեպիսկոպոս Հայոց Ղիկոպօսոյ 'ի ժ-  
դարու , հիմայ պաշտպան Ղիթիվիէի ,  
— 'ի Ղոմին ( Commines ) զԱ . Ղյրիսու  
( Սիկի , Chryseuil ) , տեղւոյն պաշտպա-  
նը , զոր աւանդութիւնն սեպէ աշակերտ  
Ղարիզու Ա . Ղիոնիսիոսին և կը ձանչ-  
նայ Հայ . — 'ի Ղանտ ( Պեճիոյ )  
զԱ . Սակար , պաշտպան տեղւոյն և  
Հայ եպիսկոպոս ժ դարու . — 'ի Ղան-  
դուա՝ զԱ . Սիմէոն , վերնոյն ժամա-  
նակակից . — 'ի Ղուգգա՝ զԱ . Օա-  
ւէն կամ Ղաւեն ( S. Davino ) . — Ղն  
գոնա զԱ . Ղիրակոս . — 'ի Ղատուա՝  
զԱ . Ղիտենտիոս եպիսկոպոս Բ դարու ,  
և այլն և այլն , որք ամէնքն այլ հայազ-  
գի ձանաչուին . . . բայց , ափսոս , որ հոս  
չէ տեղը հայկական Սիմպոսի սրբազան  
բարձունքը թուշտելու :

Փութամ ուրեմն , պարոնայք , բովան-  
դակելու բոլոր այս հայկական բնագրու-  
թեան պատկերը . և կը յուսամ որ նե-  
րէք ինձի ըսել , թէ երկիր մը , որ եթէ  
և քաղաքական պատմութեան մէջ ա-  
ռաջին գործքերը չէ գործած , բայց զը-  
րեթէ ամէն գործոց մասնակից եղած է ,  
երկիր մը որ սկսեալ 'ի Ղոյէ գրեթէ  
անընդհատ ինչուան հիմայ կը համրե  
250 ազգապետ , իբրև նախարար , թա-  
գաւոր կամ կաթողիկոս , որոց հետ կա-  
պուած են իւր աւանդութիւններն , և  
անով նաև բոլոր ժամանակագրութեան  
յիշատակը . ոյսպիսի երկիր մը , կը-

սեմ, արժանի է մտադրութեան և քրն-  
նութեան թէ իր բնիկ որդւոցն և թէ  
ամէն մարդու որ բարեկամ է ճշմա-  
րիտ փիլիսոփայութեան: Այլ չեմ վախ-  
նար այսուհետև ըսելու, թէ Հայա-  
ստան մէկ որոշեալ վիճակ կամ նպա-  
տակ մը ունեցեր է յառաջ քան զայլ  
ազգեր. և որ աւելի հարկաւոր է  
գիտնալու, դեռ այդ վիճակն լմնցած չէ:  
Վաղտնիք մը չէ ըսածս և ոչ խորհրդա-  
ւոր բան մը, այլ հնացեալ հաւանու-  
թիւն մը Հայ մտաց, թէ դեռ գործ  
մը ունի կատարելու, բարեբաստիկ գործ  
մը երկրիս վրայ: Ըմէն բան լմանցած  
չէ իրեն համար. դուռ մը պիտի բացուի  
իրեն համար ատեն մը... որ շատ այլ  
հեռու չէ ինչպէս որ կարծեմ. այդ  
դուռն երկար ժամանակ կրկին կրկին  
կղպած փակած չմնայ պիտի. արդէն  
զօրաւոր բանալիքներ կը տեսնեմ, և  
համարձակութեամբ կ'ուզեմ ցուցնել,  
չըլայ թէ վախնաք... մեր երջանկու-  
թեան ապագայ բանլիքն, այդքան եր-  
կար ժամանակէ վեր բաղձացեալ բան-  
լիքն, այդ բանլիքն է դաստիարակու-  
թիւն: Վաստիարակութիւն հայրենա-  
սիրական. հայրենասիրութիւն յեցեալ  
'ի վերայ իմաստասիրութեան և սա հիմ-  
նեալ 'ի վերայ սուրբ կրօնից: Ըսանց այս  
կապակցութեան չկայ կատարեալ կր-  
թութիւն, չկայ քաղաքականութիւն,  
չկայ մարդ կատարեալ: Ընկերական  
պարտքերը լաւ կատարելու համար՝  
մարդս կարօտ է հայրենական ներ-  
շնչման մը. և որպէս զի հայրենասի-  
րութիւնն չմոլորի և յետք չի մնայ,  
պէտք է որ առաջնորդ ունենայ զիմաս-

տութիւն, նեցուկ՝ զհաւատս, և պսակ՝  
զյաւախտենականն ճշմարտութիւն:

Ո՛վ պատանիք, սիրելի աշակերտք,  
որք քիչ ատենէն՝ ձեր ընտանեաց դառ-  
նալու համար, պիտի թողուք այս ձեր  
երկար ուսմանց սրահները, ուր յետին  
անգամ կը հնչէ ձայն անձնանուէր հօր  
մը, որ ինքն այլ պիտի դառնայ իր ըն-  
կաց մեծարանը. այդ ձայնն յիշեցնէ  
միշտ ձեզի ինչ որ քսան տարիէ վեր կը  
կրկնէր ձեզի և ձեր նմանեացը, թէ ա-  
ղէկ քաղաքացի ըլլալու համար պէտք է  
քննել և սովորիլ զհայրենիս: Ըստ է ա  
ռաջին ուսումն յետ ուսման հանդեր-  
ձեալ կենաց: Վննեցէք և սովորեցէք  
ուրեմն, սիրելիք իմ, այդ ազնիւ և բա-  
րեբեր Հայաստանը, իբրև հայրենիք  
ձեր և դայեակ ամենայն աշխարհի. քրն-  
նեցէք այդոր բնակազմութիւնը, քննե-  
ցէք այդոր բարոյականը, քննեցէք այ-  
դոր բարգաւաճումը՝ ի հարուստ լեզուին,  
որ ապահով գրաւական մ'է բազմատե-  
տակ արկածներով հնձուած գրականու-  
թեանը. քննեցէք զայդ վերջապէս, իր  
կրօնից զտութեանը, և իր ծիսից վայ-  
ելութեանը մէջ. և այդ քննութիւնքդ,  
այդ ուսմունքդ, յորդոր ըլլան ձեզի ա-  
ւելի քան զաւելի յարգելու զհայրենիս  
և մշակելու զայն ըստ ամենայն նշանա-  
կութեան բանիս: Ս ան զի այս իսկ է  
առաջին պատուէր Ըրարչին տրուած առ  
հայրն մարդկութեան, և տրուած բուն  
իսկ մեր երկրին մէջ. ԳՈՐԾԵԼ ԶՆԱ  
ԵՒ ՊԱՏԵԼ՝:

Հ. ՂԵՒՈՆԴ Վ. Մ. ԱԼԻՇԱՆ

**ՊԱՏԿԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ**

Որքերորդ դար.

Ը. Պատկեր. ամ տեսակ 700-799:

Յոյ՛սան իմաստասեր:

Ա. Ատենաբանութիւն\* : — Բ. Կանոնք \* : — Գ. Ճառ ընդ-  
դէմ Երևութականաց \* : — Դ. Ճառ ընդդէմ Պաւղի-  
կեանց \* : — Ե. Կրկին ճառք յաղագս կարգաց եկե-

1. Ծանոթ. Բ. 15: